

Վ. Հ. Ղապանցյան

ՍԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՏԱՐՎՈՂ
ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(1920—1925)

Ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում Հայաստանի Կոմունիստական պարտիան և կառավարությունը հսկայական աշխատանք կատարեցին կուլտուրական շինարարության ասպարեզում: Այդ կարճ ժամանակահատվածը ուսպուրյիկայի կուլտուրական շինարարության նախնական, բայց կարևորագույն էտապներից մեկն է: Այդ տարիներին կատարվում էին կուլտուրական ուղղությամբ առաջին քայլերը, որոնք անհրաժեշտ պայմաններ ստեղծեցին սոցիալիստական շինարարության հետագա էտապներում կուլտուրայի բոլոր զարգացման համար: Նոր կուլտուրայի հիմքերը դնելու նպատակով ձևավորվեցին մի շարք արմատական միջոցառումներ. կուլտուրական արժեքների ազդանշան, դպրոցի անջատում եկեղեցուց, անդրադարձության վերացման վերաբերյալ ղեկրետի ընդունում, ժողովրդական կրթության սիստեմի կազմակերպում և այլն:

Կուլտուրայի ճակատի բազմաթիվ և բազմապիսի խնդիրներից էր՝ կուլտուր-լուսավորական աշխատանքը ուսպուրյիկայում բնակվող ազգային փոքրամասնությունների շրջանում:

Սովետական իշխանության հաղթանակով մեր երկրում բացվեց ազգերի եղբայրական համերաշխության էրան: Կոմունիստական պարտիան անշեղորեն ղեկավարվելով Լենինյան ազգային քաղաքականությամբ, սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրերից հեղ չէ տանում՝ ինչպես բոլոր ուսպուրյիկաներում, այնպես էլ Հայաստանում բնակվող բոլոր ազգությունների՝ ադրբեջանցիների, քրդերի, հույների, ասորիների և մյուսների կուլտուրական հետամնացություն վերացման մասին: Հողվածում մենք համոզոտակի կանդրադառնանք 1920—1925 թվականներին ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող կուլտուրական աշխատանքի մի քանի կողմերին, հավակնություն չունենալով ամբողջությամբ քննարկել այդ թեմային վերաբերյալ բոլոր հարցերը:

Ցարական տիրապետության մեծապետական ճնշող քաղաքականության, եռամյա իմպերիալիստական պատերազմի, դաշնակցական կառավարության անփառունակ տիրապետության հետևանքով Հայաստանի սահմաններում ապրող բոլոր ժողովուրդները գտնվում էին ազգամիջյան զժտությունների և փոխադարձ անվստահության վիճակում: Տնտեսական փլուզման հետ միասին տեղի էր ունենում կուլտուրական անկում՝ ավերվել էին սակավաթիվ կուլտուրայի օջախները, փոքրաթիվ ինտելիգենցիան սովի և մատնվել, որի հետևանքով նրա զգալի մասը հեռացել էր երկրից: Սովետական կարգերի հաստատումից հետո բոլոր ժողովուրդների կուլտուրական զարգացման քաղաքականությունը պետք է ապահովեր թե՛ նախկինում ճնշված և բնակչության բացարձակ

մեծամասնությունը կազմող ազգության՝ հայերի, և թե՛ անցյալում նույնպես հալածված, բնակչության փոքրամասնությունը կազմող ադրեջանցիների, քրդերի, ասորիների, հույների և մյուս ժողովուրդների կուլտուրական ազատ զարգացումը: Ազգային փոքրամասնություն կազմող ժողովուրդները կանգնած էին կուլտուրական զարգացման տարբեր աստիճանների վրա՝ գլխավորության բարձր տոկոս ունեցող հույներից մինչև անգրագիտության մեջ գտնվող քրդերը:

Հայաստանի Կոմպարտիան, առաջ մղելով կուլտուրական շինարարության գործը, միաժամանակ աշխատում էր ավելի մեծ թափ հաղորդել կուլտուրայես հետ մնացած ազգային փոքրամասնությունների հոգևոր կյանքի առաջընթացին, համեմատաբար ավելի շատ միջոցներ հատկացնել այդ խնդրի իրագործմանը:

* * *

Հայտնի է, որ ցարիզմը հետևողականորեն ձգտում էր բռնի կերպով ռուսականացնել ազգային դպրոցները, այնտեղից դուրս մղելով «այլազգիների» մայրենի լեզուն և ռուսաց լեզուն պարտադրելով ոչ ռուս ժողովուրդներին: Ցարիզմի մեծապետական քաղաքականության հետևանքով, ճնշված ժողովուրդների ազգային լեզուները՝ որպես «ցածր ռասայի» լեզուներ հիմնարկներից դուրս էին մղված: Հանրակրթական և մասնագիտական դպրոցներում չէին դասավանդում այդ լեզուներով: Բուրժուական ոգով դաստիարակվող փոքրաթիվ ազգային ինտելիգենցիան հաճոյանում և սպասարկում էր ցարական կարգերին, կտրվում էր աշխատավորությունից, մոռացության տալով ժողովրդին մատչելի և սիրելի մայրենի լեզուն:

Սովետական կարգերը նպաստավոր պայմաններ ստեղծեցին ինչպես հայոց լեզվի, այնպես էլ ազգային մյուս լեզուների յարգավաճման և զարգացման համար:

Պետք էր հետևել, որպեսզի հայոց լեզուն անաղարտ մնար, օտար բառերով այն չհեղեղվեր: Պարտիան աշխատում էր այնպիսի քաղաքականություն վարել, որպեսզի արհեստականորեն չհայացվեին այն տերմիններն ու անունները, որոնք միջազգային գործածություն և ընդունելություն ունեին, պատվաստվել և տարածվել էին մասսաների մեջ, քաղաքացիական իրավունք ստացել ու գտնվում էին կենդանի գործածության մեջ: Այդ բառերը առավել ստույգ էին արտահայտում համընդհանուր հասկացությունները, հայ ժողովրդին հաղորդակից էին դարձնում սովետական մյուս ժողովուրդների և համաշխարհային կուլտուրայի հետ: Իսկ ինչ վերաբերվում էր արհեստականորեն ստեղծված, օտարոտի բառերին, ապա դրանք կյանքի բնականոն ընթացքով դուրս կմղվեին մեր լեզվից:

Պետք էր խուսափել գրաբարի փոխառումներից և ավելի հարմար բառեր մտցնել ժողովրդի բառարանը՝ ու այդ ճանապարհով ստեղծել, զարգացնել գրական լեզուն, մոտեցնելով այն ժողովրդական մասսաներին, այդ հիմքի վրա զարգացնել պետական լեզուն:

ՀՍՍՌ Ռեկոմի 1920 թ. դեկտեմբերի 9-ի դեկրետով ռեսպուբլիկայի սահմաններում հայերենը ճանաչվեց որպես պետական լեզու: Այդ ակտը մեծ նվաճում էր՝ Սովետական իշխանության օրգանները մասսաներին մոտեցնելու և հարազատեցնելու իմաստով: Սակայն այդ օրենքի կիրառումը չէր նշանա-

կում, որ հայոց լեզուն դառնում էր գերիշխող: Ռեսպուբլիկայի տերիտորիայում բոլոր լեզուները իրավահավասար էին և քաղաքացիական նույն իրավունքն ունեին: ՀՍՍՌ Կոնստիտուցիայի 20-րդ հոդվածն այդ մասին ասում էր. «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ազգային փոքրամասնություններն ազգային կուլտուրայի ազատ զարգացման և իրենց մայրենի լեզուն գործածելու իրավունք են վայելում համաձայն աշխատավոր ժողովրդի իշխանության հիմնական սկզբունքների»:

ՀՍՍՌ Լուսժողովրդատի 1921 թ. մայիսի 6-ի՝ «Ռասականդման լեզվի և լեզուների դասավանդության մասին» հրամանով² ռեսպուբլիկայի բոլոր դպրոցներում ուսուցումը տարվում էր մայրենի լեզվով: Ազգային փոքրամասնությունների դպրոցների համար պետական լեզուն՝ հայերենը՝ պարտադիր էր որպես դասավանդվող առարկա: Ադրբեջանական բնակավայրերում հայերենի դասավանդումը ադրբեջանական դպրոցներում, ինչպես նաև ադրբեջանների դասավանդումը հայկական դպրոցներում, համարվում էր ցանկալի, բայց ոչ պարտադիր:

Պարտիան և կառավարությունը մեծ աշխատանք էր տանում ռեսպուբլիկայում ուսուց լեզվի տարածումը և ուսուցումը ամուր հիմքերի վրա դնելու համար, որպեսզի լեհինի և Հոկտեմբերի լեզուն իր համար ազատ ճանապարհ բացեր դեպի աշխատավոր ժողովրդի լայն խավերը:

Ռուսաց լեզվի տարածումը և ուսուցումը նոր պայմաններում տեղի էր ունենում պետական և կուլտուրական շինարարության միջոցով, կամավորության սկզբունքներով:

Լեզուների հանդեպ վարած պարտիայի քաղաքականության այդ կոնկրետ դրսևորումները քաղաքական և կուլտուրական խոշոր նշանակություն ունեին, քանի որ դրանցով Սովետական իշխանությունը մատչելի էր դառնում բոլոր ազգերի աշխատավորների համար, համապատասխան պայմաններ էին ստեղծվում ազգային կուլտուրայի անկաշկանդ զարգացման ու ծաղկման համար:

Ազգային փոքրամասնությունների կուլտուրական աշխատանքի ընդհանուր ղեկավարության նպատակով ՀՍՍՌ Լուսժողովրդատին կից 1922 թ. ստեղծվում է Ազգային փոքրամասնությունների բյուրո³, որի կազմի մեջ մտնում են ադրբեջանցիների, ռուսների, քրդերի, հույների, ասորիների ներկայացուցիչները: 1923 թ. հունվարին Ազգային փոքրամասնությունների բյուրոն վերակառուցվում է և վերածվում՝ Ազգային փոքրամասնությունների խորհրդի (Совнацмен), որի նախագահը ԼժԿ-ի կոլեգիայի անդամ էր⁴: 1924 թ. հոկտեմբերին, Հայաստանի ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքը կոորդինացնելու նպատակով, ՀԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի ագիտացիոն բաժնին կից կազմակերպվում է Ազգային փոքրամասնությունների կոլեգիա, որի մեջ մտնում են տարբեր ազգությունների ներկայացուցիչներ⁵:

Այդ պարտիական և պետական հատուկ օրգաններն աշխատում էին ազգային փոքրամասնությունների աշխատավոր զանգվածներին մասնակից դարձնել ռեսպուբլիկայի հասարակական-քաղաքական և կուլտուրական միջոցառում-

1 «Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ.», Ժողովածու, Երևան, 1926, էջ 16:

2 Տե՛ս «Կոմունիստ» 1921, № 77:

3 Տե՛ս «Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ.», Ժողովածու, Երևան, 1926:

4 Նույն տեղում:

5 ՍՄԿՊ ԿԿ-ին կից ՄՀԻ վրացական ֆրիլայի արխիվ, ֆ. 13, մ. 1, ց. 1, գ. 288:

ներին: Այդ նպատակով պարբերաբար հրավիրվում էին անպարտիական դուռացիական համագումարներ, կոնֆերենցիաներ, խորհրդակցություններ, որտեղ քննարկվում էին առանձին շրջաններում բնակվող տարրեր ազգության դուռացիների կարիքների և պահանջների վերաբերյալ շատ խնդիրներ: Այդ միջոցառումների ընթացքում տեղեկություններ էին տրվում երկրի արտաքին քաղաքականության, ներքին տնտեսական ու կուլտուրական շինարարության և այլ հարցերի մասին: Այդ ժողովներին մասնակցում էին նաև ռեսպուբլիկայի պարտիական և պետական ղեկավար աշխատողները, որոնք հանդես էին գալիս քաղաքական, տնտեսական ու կուլտուրական բնույթի վեկուցումներով և դրանով ավելի մոտիկից էին ծանոթանում ազգային փոքրամասնությունների կարիքներին ու պահանջներին: Այդ հանգամանքը նրանց օգնում էր կոնկրետ դիմադրական ազգային քաղաքականության և կուլտուրական շինարարության ասպարեզներում: Ազգային փոքրամասնությունները Հայաստանում ինտելիգենտ քի՝ ուժեր ունեին, որոնց միջոցով կարելի լիներ առաջ մղել նրանց կուլտուրական աշխատանքը: Այդ ազգությունների լեզուներին տիրապետող ուսուցչությունները գրեթե չկար: Նշված և այլ կարգի դժվարությունների վերացման համար Հայաստանի Լուսժողովումատը ձեռնարկում է մի շարք միջոցառումներ՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով դասագրքեր հրատարակելու, դպրոցական աշխատողների կադրեր պատրաստելու նպատակով կուրսեր բանալու, մյուս ռեսպուբլիկաների սովնացմանների ու Լուսժողովումատների հետ կապեր ստեղծելու և այլ ուղղություններով: Ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքի հարցը հետազոտվող ժամանակաշրջանում քննության առարկա է դառնում ՀԿ(Բ)Պ Կենտրոնական Կոմիտեի պլենումում:

Սովետական Հայաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների կազմը 1926 թվականին հետևյալ պատկերն ուներ. ադրբեջանցիներ՝ 89 հազար, քրդեր՝ 10 հազար, հույներ՝ 3 հազար, ասորիներ՝ երկու և կես հազարից մի քիչ ավելի, իսկ մյուս ժողովուրդները (հրեաներ, վրացիներ և մյուսներ)՝ 1500, ընդամենը՝ 106 հազար հոգի:

Ադրբեջանցիներն առավել խիտ բնակվում էին Վեդիբասարի, Աղլարայի, էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Դիլիջանի և Դարալագյազի գավառներում: Նրանց կուլտուրական մակարդակը շատ ցածր էր, քանի որ ցարական ռեժիմի օրոք նրանք ազգային դպրոցներ չունեին, իսկ ռուսական դպրոցներում ադրբեջաներեն լեզվի դասավանդման հարցի վրա ոչ մի ուշադրություն չէր դարձվում: Լեզուն դասավանդում էին գլխավորապես մոլլաները, որոնք գաղափար չունեին ավելի ուսուցման մեթոդների մասին, աշակերտների դուլաները լցնում էին դորանի անիմատ ասացվածքներով: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանում Սովետական իշխանության առաջին տարիներին ադրբեջանական դպրոցները հատկապես ծանր պայմաններում էին գտնվում, կառավարությունը լայն չափով էր ծավալում ադրբեջանական դպրոցական ցանցը, ղեկավարող հասակներին ավելի շատ էր ընդգրկում ուսման մեջ և առհասարակ նրանց շրջանում տարվող քաղաքական-կուլտուրական աշխատանքը ավելի ուժգին թափվել էր ընթանում: Սովետական իշխանության առաջին տարիներին հնարավոր էր գտնել քիչ թիվ շատ պատրաստված ադրբեջաններն լեզվի դասատուներ,

6 ՍՄԿՊ ԿԿ-ին կից ՄԼԻ վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, ց. 1, գ. 288, թ. 285:

7 ՀՌՍՀ ԿՊԱ, ֆ. 3316, ց. 18, գ. 65, թ. 158 (թվերը կլորացված են):

ուստի ստիպված մանկավարժական աշխատանքը վստահում էին շնչին գրագիտություն ունեցող անձնավորությունների, իսկ որոշ դպրոցներում՝ նույնիսկ մուլանների: Աղբյուրներեն լեզվի ուսուցիչների «սովը» մեղմելու նպատակով, ՀՍՍՌ-ի Լուսժողովատուր հարկադրված էր Սովնացմանի միջնորդությամբ, աշխատանքի հրավիրել նաև Արևմտյան Հայաստանից եկած հայերին:

Վերջիններս լավ տիրապետում էին թուրքերեն լեզվին, բայց դա այնքան էլ ըմբռնելի չէր տեղական աղբյուրների համար:

1920 թվականին ողջ Հայաստանում ոչ մի աղբյուրական դպրոց չկար, իսկ 1923 թ. արդեն բացվել էր 56 դպրոց, որոնցից տասնչորսը՝ Երևանի, և նույնքան էլ Ալեքսանդրապոլի, հինգը՝ Նոր Բայազետի, չորսական՝ Լոռի-Փամբակի և Դիլիջանի, երեքական՝ Զանգեզուրի, Դարալագյազի, Էջմիածնի և Երկուր Մեղրու գավառներում⁸:

Բոլոր գավառներում դպրոցների վիճակը միատեսակ չէր, օրինակ Լոռի-Փամբակի գավառում աղբյուրական բնակչության տնտեսական դրությունը համեմատաբար բավարար էր, ամեն մի մեծ գյուղում կար բարեկարգված դպրոց, գյուղացիները իրենց վրա էին վերցրել դպրոցի և ուսուցիչների կարիքները ապահովելու խնդիրը: Դավառի համարյա յուրաքանչյուր գյուղում պատահում էին գրագետ գյուղացիներ, որոնք նույնիսկ թերթ էին ստանում: Շատ գյուղերում մեջիտները գյուղացիներն իրենց նախաձեռնությամբ վերածել էին դպրոցների⁹: 1923 թվականին Երևանում կար չորս աղբյուրական դպրոց, որոնցում սովորում էին 600 երեխաներ¹⁰: Այդ տարիների մամուլի էջերում հաճախ կարելի էր հանդիպել վանազան թղթակցությունների, աղբյուրներեն լեզվին տիրապետող ուսուցիչների պահանջի վերաբերյալ:

Նշված ժամանակաշրջանում աղբյուրական բնակչության մեջ լայն աշխատանք էր տարվում թուրքական նոր լատինական այբուբենը ուսուցանելու ուղղությամբ: Այդ նպատակով Երևանում 1926 թ. կազմակերպվում է հատուկ կոմիտե, որն այդ գործի կազմակերպման համար ձեռք է բերում 7490 ուրբի գումար¹¹: Շուտով քաղաքում կազմակերպվում են լատինական այբուբենն ուսումնասիրող երեկոյան դասընթացներ, իսկ գավառներում բյուրոներ, որոնք նույնպես աշխատում էին նոր այբուբենը աղբյուրացի բնակչության շրջանում արմատավորելու ուղղությամբ:

1925 թ. ապրիլի 15-ին հրավիրվում է Երևանի գավառի անպարտիական կոնֆերանս¹², որտեղ խոսվում է աղբյուրական մասսաների տնտեսական դրության բարելավման մասին և հայտնվում նրանց գոհունակությունը տեղական սովետական օրգաններին: Կոնֆերանսը նշում է Վեդիբասարում տեղ գտած թերությունները և գործկոմին առաջարկում մի շարք կազմակերպական և տնտեսական միջոցառումներով ուժեղացնել աշխատանքներն այդ շրջանում: Ժողովրդական տնտեսության վերականգման վերջում հաջողվում է ստեղծել աղբյուրական դպրոցական աշխատողների բավական թվով կադրեր և ուսուցիչների պակասը կորցնում է իր սրությունը: Լուսժողովատուր և Սովնացմանը հոգ են

⁸ ՄՄԿՊ ԿԿ-ին կից ՄԼԻ վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 358, թ. 65—67:

⁹ ՄՄԿՊ ԿԿ-ին կից ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 358, թ. 65—67:

¹⁰ «Ջարյա Վոստոկա» 1923 թ., 12 օգոստոսի:

¹¹ ՄՄԿՊ ԿԿ-ին կից ՄԼԻ վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, ց. 1, մ. 1, գ. 288, թ. 285:

¹² Նույն տեղում, գ. 296:

տանում նրանց որակի բարձրացման ուղղությամբ: Ադրբեջանական դպրոցների, աշակերտների, ուսուցիչների թիվը տարեցտարի ավելանում է, որը երևում է ստորև բերված աղյուսակից:

Տարին	Դպրոցների քանակը	Սովորողների քանակը	Ուսուցիչների քանակը	Մեկ դպրոցին ընկնող բնակչու- թյան թիվը
	1-ին աստիճանի դպրոցներ			
1922—1923 ուս. տարի	36	1521	40	—
1923—1924	54	2584	63	1435
1924—1925	93	3780	138	967
1925—1926	113	3476	131	863
	Թոթնամյակներ			
1925—1926	1	606	18	
	2-րդ աստիճանի դպրոցներ			
1923—1924	1	35	8	
1924—1925	1	48	9	

Բացի աղյուսակում բերված տվյալներից, գոյություն ունեն մոտ 20 հայ-ադրբեջանական և 1 ռուս-ադրբեջանական խառը դպրոցներ¹³:

Նոր թուրքական այրուրենն անվիճելի առավելություն ուներ հնի նկատմամբ: Գրելու նոր սխտեմի շնորհիվ սովորողները երկու-երեք ամսվա ընթացքում լրիվ գրաճանաչ էին դառնում, այնինչ հին գրելաձևով հնարավոր չէր լինում դրան հասնել նույնիսկ մի քանի տարվա ընթացքում: Գրելու նոր սխտեմի շնորհիվ ադրբեջանցիների մեջ տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքն ավելի մեծ հաջողությամբ էր առաջ գնում, կուլտուրան ավելի հեշտությամբ էր դառնում լայն մասսաների սեփականությունը:

Մինչև 1923 թվականը Երևանում ադրբեջաններն լեզվով հրատարակվում էր մեկ շաբաթաթերթ, որը քիչ չափով էր նպաստում բնակչության հոգևոր պահանջների բավարարմանը: Հետագայում այդ թերթը փակվում է, այն հուլիսով, որ դրա փոխարեն ամենօրյա թերթ հրատարակվի, սակայն, գրական և նյութական միջոցների պակասը հնարավորություն չի տալիս շուտափույթ սկսել նախատեսվող թերթի հրատարակումը և որպես ժամանակավոր միջոցառում մայրաքաղաքի թերթերից մեկը մշտական էջ է հատկացնում ադրբեջանցիների կյանքը լուսաբանող նյութերին¹⁴:

Ադրբեջանական ժողովրդի կյանքում կուլտուրական խոշոր նվաճում էր «Զանգի» շաբաթաթերթի հրատարակումը, որը սկզբում տպագրվում էր արաբական շրիֆտով և միայն 3 սյունակն էր լույս տեսնում նոր այրուրենով: Բայց

¹³ Թվական տվյալները վերցված են՝ ա) ՀՌՍՀ ԿՊԱ, ֆ. 3316, ց. 18, գ. 65, թ. 158—162 և բ) «Երզրգային Հայաստան 1920—1925 թթ.», ժողովածու, Երևան, 1926 թ.:

¹⁴ «Զարյա Վոստոկա» 1923 թ., 12 օգոստոսի:

արդեն 1926 թվականից նոր այբուբենի կոմիտեի որոշմամբ արաբական շրիֆտը փոխարինվելու էր լատինականով, որի համար Բաքվից նոր շրիֆտ էին ստացել¹⁵։

ՀԿ(Բ)Պ Կենտկոմի կին բաժինը ադրբեջանուհիների շրջանում այդ տարիներին ակտիվ աշխատանք էր տանում հրահանգչուհու միջոցով։ Այդ նպատակով Երևանում և Ուլուխանլու (այժմ Մասիս) գյուղում կահավորվում են ակումբներ։ Ակումբներին կից գործում էին՝ լիկկայան, թատերական խմբակ, պարտիական և կոմերիտական բջիջներ, որոնցում ընդգրկված էին շատ ադրբեջանուհիներ։ Քաղաքի մասշտաբով հրավիրվում էին ադրբեջանուհիների ընդհանուր ժողովներ, որոնք ուղեկցվում էին զանազան հետաքրքրական միջոցառումներով։ Այդ տարիներին նրանց համար կարդացվող զեկուցումների թեմատիկան հետևյալն էր. բազմակնության վնասները, անգրագիտության վերացումը, Հոկտեմբերյան ռեվոլյուցիան, Հայաստանի սովետականացումը և այլն։

Շնորհիվ կին բաժնի տարած ակտիվ աշխատանքի, այն նվաճում է ադրբեջանցի կանանց սերն ու համակրանքը և լայն ժողովրդականություն է ձեռք բերում։ Ադրբեջանուհիները հաճախակի կին բաժնին դիմում են զանազան հարցերով և բողոքներով, որոնց մեծ մասը վերաբերվում էր ամուսնալուծության հարցին։ Կին բաժինը այդ բողոքներին ուշադիր վերաբերմունք էր ցուցաբերում, օգնում էր նրանց գտնելու այդ հարցերի լուծման ճիշտ ճանապարհները։

ՀԿ(Բ)Պ Երևանի կոմիտեի կին բաժնի ձեռնարկությամբ դեռևս 1922 թ. հունիսին, աշխատավոր ադրբեջանուհիների համար բացվում է կուսակցական-հրահանգչական դպրոց, որի նպատակն էր նրանց մեջ աշխատանք տանելու համար պատրաստել ագիտատորներ և պրոպագանդիստներ։ Դպրոցում տարրական գիտելիքներ պետք է ստանային քաղաքատնտեսությունից, պարտիայի պատմությունից, սովետական շինարարությունից, կանանց շարժման պատմությունից և այլ առարկաներից։ Դպրոց հաճախում էին 20 հոգի, դասախոսների թվում էին Շադունցը, Մակինցը և ուրիշներ։ Ծրագրից դուրս անցնում էին նաև ռուսաց լեզու¹⁶։

Շնորհիվ ադրբեջանուհիների մեջ ծավալված կուլտուրական աշխատանքի, նրանց հնարավորություն է տրվում ազատություն ստանալ, իրավունքներ ձեռք բերել, որով վերջ է տրվում ադրբեջանցի կնոջ դարավոր հետամնացությանը և սնոտիապաշտությանը։

* * *

Սովետական Հայաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների մեջ ազգաբնակչության քանակով երկրորդ տեղը բռնում էին քրդերը։ Պատմական և կենցաղային անբարենպաստ պայմանների պատճառով քրդերը կուլտուրապես չափազանց հետ էին մնացել։ Նրանք չունեին կուլտուրայի ամենատարրական և ամենաանհրաժեշտ գործոնը՝ գիրը, այբուբենը։ Ցարական կառավարությունը հարյուր տարի քրդերին տիրելուց հետո, միայն 1904 թվականին Սուրմալուում բացում է քրդական դպրոց (երկդասարանային ուսումնարան)։ Այդ փաստը բնորոշ էր ինքնակալական Ռուսաստանի համար և ցայտունորեն վկայում է այն մասին, թե ցարիզմն ինչպիսի վայրենի և արհամարհական վերաբերմունք ուներ ծայրամասերում բնակվող ազգային փոք-

¹⁵ ՀՌՍՀ ՊԿԱ, ֆ. 3316, ց. 18, գ. 65։

¹⁶ «Խորհրդային Հայաստան» 1922, № 127։

րամասնությունների կուլտուրայի նկատմամբ: Յարական կառավարությունը արհեստականորեն ստեղծել էր այսպես կոչված «քրդական հարց», որի քողի տակ նրանց օգտագործում էր որպես բռնի ռազմական ուժ, իսկ սուլթանական Թուրքիան ռազմատենչ բեղերին և շեյխերին մշտապես զրգուում էր նրանց հարևանների, հատկապես հայերի դեմ: Բացի դրի բացակայությունից, քրդերի մեջ կրթություն և լուսավորություն տարածելու գործին խանգարում էին նաև կրոնական նախապաշարումները և նրանց ոչ մշտակյաց ասլերակերպը:

Սովետական իշխանությունը ձևափոխեց քուրդ ժողովրդի տնտեսական, կուլտուր-կենցաղային վերակառուցման գործը: Քրդական կուլտուրայի անխոնջ մշակ կազմեց (Հակոբ Ղազարյան) տարիների փորձերից և դժվարություններից հետո, հայկական այրուրենն օգտագործելով, մշակեց քրդերի հնչյունաբանությունը համապատասխան այրուրեն: Նախասովետական կարգերում եվրոպական միսիոներների ջանքերը հայատառ քրդերեն գրականություն ստեղծելու ուղղությամբ, անհաջողության էին հանդիպել: Նրանք հայ այրուրենը ոչ մի փոփոխության չէին ենթարկել և հայատառ քրդերենով տեր-վել էին քրիստոնեական գրքեր (ավետարան), մի հանգամանք, որը հենց սկզբից խափանել էր այդ գործը: Կադոյի այրուրենի առավելությունն այն էր, որ նա հայերեն այրուրենի միջից դուրս էր գցել մի քանի տառեր և մի քանիսի վրա էլ համապատասխան նշաններ դնելով ստեղծել էր քրդերեն հնչյուններն արտահայտող մի այրուրեն: Բացի այդ, նա այդ այրուրենով տվել էր այնպիսի նյութեր, որոնք կրոնական բնույթ չունեին, այլ վերցվել էին քրդական կյանքից և միանգամայն հարազատ էին թե՛ եզդիների և թե՛ մուսուլման քրդերի հոգևորականությանը: Կադոյի բոլոր գրական ճիգերի սինթեզը կազմում է նրա կազմած քրդերեն առաջին ընթերցարանը՝ «Շամս»-ը («Արև»), որը լույս է տեսնում 1921 թվականին ՀՍՍՌ Լուսժողովրդամտի հրատարակությամբ:

Արդեն 1921—22 ուս. տարում Սովետական Հայաստանի տերիտորիայում բացվում են 8 քրդական դպրոց, չորսը՝ Ալեքսանդրապոլի, իսկ մյուս չորսը էջմիածնի գավառներում, որտեղ սովորում էին 250—300 եզդի երեխաներ¹⁷:

Կադոյի ստեղծած այրուրենը և քրդական առաջին այրուրենարանը ժամանակին խոշոր դեր կատարեցին քուրդ ժողովրդի մշակույթի ասպարեզում՝ իրեն մեծ գործի սկիզբ: Հետագայում քրդական դպրոցների նոր սահանքներից ելնելով Լուսժողովրդամտը միջոցներ ձևափոխեց քրդերի համար լատինական տառերով դասագիրք հրատարակելու ուղղությամբ¹⁸: Քրդական 10 դպրոցներում դասավանդումը կատարվում էր հայերեն լեզվով և կադոյի «Շամս» ընթերցարանով, իսկ 1 դպրոցում՝ ռուսերեն լեզվով:

1926 թ. ամբողջ Անդրկովկասում կար ընդամենը երկու քուրդ ուսուցիչ՝ Ալիսան Շադինովը և Ամինե Ավդալը¹⁹: Հայաստանի Կոմպարտիան և Սովետական կառավարությունը մեծ նշանակություն էին տալիս քուրդ ժողովրդի համար կազմակերպվող համագումարներին, կոնֆերենցիաներին, խորհրդակցություններին: Միայն 1924—1925 թթ. տեղի են ունենում երեք անսպարտիական

¹⁷ «Խորհրդային Հայաստան» 1921, № 258:

¹⁸ 1928 թ. ՀՍՍՌ Լուսժողովրդամտի որոշմամբ վերացվում է հայերենի հիման վրա կազմված այրուրենը և կազմվում է քրդական նոր այրուրեն (կազմողներ՝ Արաք Շամիլով և Մարագուլով) լատինական տառերի հիման վրա: 1944 թ. Հ. Ջեդիև, Վ. Նադիրև և Ա. Ավդալը ուսական տառերի հիման վրա ստեղծում են ներկայումս գործող քրդական այրուրենը:

¹⁹ Տե՛ս Ամինե Ավդալ, Անդրկովկասյան քրդերի կենցաղը, Երևան, 1957:

կոնֆերանսներ և դյուզական ակտիվի մեկ խորհրդակցություն²⁰։ Քրդերի մեջ տարվող կուլտուրական աշխատանքներին նպաստող կարևոր միջոցառումներից էին 1926 թ. տեղի ունեցած քուրդ-եզդի ժողովրդի ակտիվի առաջին խորհրդակցությունը և Համահայաստանյան քրդական անդրանիկ համագումարը։ 1926 թ. ապրիլի 19—20-ը տեղի է ունենում Հայաստանի քուրդ-եզդի տղաբնակչության ակտիվի առաջին խորհրդակցությունը²¹, որին մասնակցում են Լենինականի և Էջմիածնի դավառների 28 պատգամավորներ։ Խորհրդակցությանը հրավիրվում են Ա. Դ. Հովհաննիսյանը, Ե. Բակունցը, Մելիք Հովսեփյանը, Ս. Շապունցը, Սաֆոազրեկյանը, Գ. Աթարբեկյանը, Ս. Հակոբյանը, Ա. Մուսլյանը, Հ. Գյուլի-Քևվիսյանը, Դաշտոյանը, Ա. Շահգեղյանը։

Բացելով խորհրդակցությունը, Դ. Դյունունին իր խոսքում նշում է, որ Սովետական իշխանությունը ազգային փոքրամասնությունների մեջ տարվող աշխատանքին մեծ նշանակություն է տալիս, ուստի հրավիրված խորհրդակցությունը պետք է լրջորեն զրադվի օրակարգում դրված հարցերով և ակտիվ մասնակցություն ցույց տա խորհրդակցության կողմից ընդունված որոշումները կյանքում կիրառելու գործում։

Խորհրդակցության քննարկած հարցերը հետևյալներն էին՝ ընդհանուր քաղաքական դրությունը, դյուզացիության և կոռպորացիայի վարդապետան հետևողները, կուսակցության խնդիրները ազգային փոքրամասնությունների հետ տարվող աշխատանքների բնագավառում, կուսակցական և խորհրդային աշխատանքների դրությունը ազգային փոքրամասնությունների մեջ, քաղուսավորության աշխատանքը և դպրոցական շինարարությունը և այլն։

Խորհրդակցության նախագահության կազմում էին՝ Զանոն Կարապետ, Թեյմուրով Շամիր, Մամուլ Արաս, Հասանով Փաշա, Շամիրով Արար, Գանջեղյան Արմենակ։

Քաղուսավորական աշխատանքների և դպրոցական շինարարության մասին զեկուցող Ա. Խեչումյանը նշում է, որ կուլտուրական ճակատում ղեկավարող քիչ լին է արված, բայց երբ արվածը համեմատվում է անցյալի հետ, ակրնհայտ է դառնում Սովետական իշխանության տարիներին կուլտուրական ասպարեկի նվաճումները։ Նա շեշտում է, որ համապատասխան մարմինները զրադվում են քրդերին ևս մի նոր՝ լատինական շրիֆտով այբուբեն տալու հարցով, որը այդ ժամանակ քննվում էր Լենինգրադում։ Անդրադառնալով դպրոցական գործին, զեկուցողը նշում է, որ զրան խանդարում են քրդերի քոչվորական կյանքը, պատրաստված ուսուցիչների պակասը, իսկ քաղուսավորական աշխատանքն էլ հնարավոր չի եզկել ծավալել զիր շունենալու պատճառով։ Ամբողջ Հայաստանում, միայն Լենզավառում գործել են 3 լիկկայան, 1 և 2 խրճիթ ընթերցարան։ Լիկկայաններում պարապմունքները տարվում էին Լազոյի դասազրքով, որը հասակավորների համար աննպատակահարմար էր։ Խորհրդակցությունը Խեչումյանի զեկուցման առթիվ ընդունված բանաձևում մատնանշում է, որ կուլտուրական հետամնացության զլխավոր պատճառներից մեկը քրդական շրիֆտի բացակայությունն է։ Խորհրդակցությունը կուլտուր-կրթական աշխատանքները կանոնավորելու համար անհրաժեշտ է գտնում՝ հարվածային կարգով կիրառել լատինական շրիֆտը, հրատարակել համապատասխան դասազրք։

20 ՍՄԿՊ ԿԿ-ին ԿԻց ՄԼԻ վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, ց. 1, մ. 1, դ. 298, թ. 287։

21 ՍՄԿՊ ԿԿ-ին ԿԻց ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 7, դ. 323, թ. 1—7։

բեր, ուշադրություն դարձնել դպրոցների շենքերի կահավորմանը, ստեղծել ուսուցիչների կադր, լայնացնել լիկկայանների և խրճիթ-ընթերցարանների ցանցը, կին լաժնի միջոցով քուրդ աղջիկներին ընդգրկել դպրոցներում, Հենգավառի 7-րդ գավառամասում ունենալ յոթնամյա դպրոց, էջմիածնի, Ղուրդուղուլիի և Հենինականի 6-րդ գավառամասերում բացել դպրոցներ, գավլուսբաժինների միջոցով՝ ուսուցիչների աջակցությամբ երեխաներին ավելի երկարատև կապել դպրոցների հետ: Հայաստանի գյուղատնտեսության և կուլտուրայի զարգացման հեռանկարների մասին ղեկուցում է Դաշտոյանը, իսկ քրդերի մեջ տարվող պարտիական աշխատանքների մասին՝ Ա. Շամիրովը և այլն:

1926 թ. մայիսի 23-ին Հաջիխալիլի 7-րդ գավառամասում կայանում է Համահայաստանյան քրդական առաջին համագումարը²², Համագումարը բացելով Ա. Շամիրովը մանրամասնորեն կանգ է առնում քրդական անդրանիկ համագումարի նշանակության վրա, շեշտելով, որ պատմության մեջ չի եղել այնպիսի մի նշանակալից օր, երբ քրդերը կարողանային ազատորեն արտահայտել սեփական շահերը և խոսել իրենց վշտերի մասին, նա նշում է, որ համագումարին մասնակցող գյուղական լայն մասսաների ներկայացուցիչները պետք է հաշվի առնեն Սովետական իշխանության հաստատումից հետո անցած վեց տարվա ժամանակամիջոցում քրդերի մեջ տարված մեծ աշխատանքը և ընդգծեն ապագա անելիքները:

Համագումարին մասնակցում են 75 պատգամավոր, որոնցից 5 կին: Համագումարի նախագահության կազմում ընտրվում են Շամիրովը, Թեյմուրովը, Դյուրգարյանը, Մեժլումյանը, Բրո Ալիևը, Կ. Ջանոկը, Խալիլովը, Բյալալ Դուլև Շամոկը, Ջաթո Հասոկը: Քարտուղարություն՝ Մուրադյան Ա., Մխիթարյան Վ. և Ռշաունի Ն.:

Համագումարի պատվավոր նախագահության մեջ ընտրվում են Կալինինը, Ս. Համբարձումյանը, Ա. Հովհաննիսյանը, Ա. Կարինյանը և ուրիշներ:

Համագումարի օրակարգի հարցերից էին՝ կուլտուր-կրթական աշխատանքը, կենցաղի և այլ հարցեր:

Կուլտուր-կրթական աշխատանքների մասին ղեկուցող Արար Շամիրովը կանգ է առնում եզդի ժողովրդի կուլտուրական հետամնացության և Սովետական իշխանության կողմից եզդիների համար գրականություն ստեղծելու աշխատանքի վրա: Նա նշում է, որ եզդիներն լեզվով՝ լատինական շրիֆտով այբուբենը մշակվում է և ուղարկված է Մոսկվա՝ հաստատվելու:

Ելույթ ունեցողները հավանություն տալով դպրոցների բացման գործին, են ընդունում պիոներական արտահագուստը, ասելով, որ բաց ծնկներով երեխաներին դպրոց ուղարկելուն դեմ են: Եզդիական կենցաղի մասին ղեկուցող Թեյմուրովը նշում է, որ զալանի, կնոջ առևանգման առթիվ տեղի են ունենում թշնամություններ և սպանություններ: Եզդի ժողովուրդը ամուսնության ժամանակ չի դիմում բժշկական քննության:

Համագումարը խնդրում է Հայաստանի Կենտգործկոմին, որպեսզի օրենսգրքի մեջ ավելացվեն զալանի, բազմակնության, դեռահաս ամուսնության արգելման վերաբերյալ կետեր:

Քուրդ ժողովրդի Համահայաստանյան անդրանիկ համագումարը հսկա-

²² ՍՄԿՊ ԿԿ-ին Կից ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 7, գ. 323, թ. 16—20:

յական նշանակություն ունեցավ նրա տնտեսական և կուլտուրական հետադա-
վերելքի համար:

Շատ դանդաղ, բայց անշեղորեն քուրդ ժողովուրդը շարժվում էր դեպի
նոր, սոցիալիստական կուլտուրան:

* * *

Հայաստանի Կոմպարտիան կուլտուր-լուսավորական աշխատանք էր տա-
նում նաև փոքրաթիվ բնակչություն ունեցող ասորիների և հույների մեջ: Նա-
խասովետական շրջանում Պարսկաստանում ասորիների «լուսավորությամբ»
զբաղվում էին ամերիկյան միսիոներները, իսկ կովկասում՝ ուղղափառ ռուս
հոգևորականները: Պարսկաստանում ասորիների լուսավորության քողի տակ
ամերիկյան և եվրոպական միսիոներները ստեղծել էին հոգևոր-կրոնական
ուսմունքի մի կախարդական շրջան, որով ամերիկյան և եվրոպական իմպերիա-
լիստները անց էին կացնում իրենց նվաճողական քաղաքականությունը: «Բա-
րեպաշտ» ամերիկյան և եվրոպական միսիոներների ուղջ գրականությունը բաղ-
կացած էր աստվածաշնչից, ավետարանից, սաղմոսից և կրոնական-բարոյա-
խոսական դառանցանքներով խճողված ամեն տեսակ լեզունդներից, որով մթա-
գնում էին ասորիների միտքը: 1914 թ. իմպերիալիստական պատերազմից մի
քանի տարի առաջ ասորիների երիտասարդ ուժերը փորձում են դուրս գալ կրո-
նական այդ ստրկացումից, բայց դա նրանց չի հաջողվում: Ասորիների լուսա-
վորումը ցարիզմի օրոք այնպես էր ընթանում, որ վերջիններս հրաժարվում են
և մոռանում իրենց մայրենի լեզուն, կուլտուրան և ուժեղ կերպով ռուսացվում
են ուղղափառ եկեղեցու կողմից: Ասորիների մայրենի լեզուն դադարում օրոք
չէր դասավանդվում, իսկ երեսաներին ջանասիրաբար սովորեցնում էին եկեղե-
ցական-սլավոնական գրին, որպեսզի նրանք դառնային ցարիզմի խոնարհ
ծառանքի: Ռուսիֆիկացման քաղաքականությունը այնպես ճարպկորեն և վար-
պետորեն էր անցկացվում, որ իրենք՝ ասորիք հաճույքով կուլ էին դնում այդ
քաղաքականությանը, հրաժարվելով իրենց մայրենի լեզվից՝ և կուլտուրայից:

Հայաստանի սովետականացման պահին դժվար էր գտնել ասորիներ, որոնք
շատ թե քիչ տիրապետեին իրենց մայրենի լեզվին: Չկային այնպիսի դասա-
գրքեր, որոնցով գոնե սովորեին աշխատանքային դպրոցի առաջին երկու դասա-
րաններում:

Այսպիսով, մի կողմից ամերիկյան և եվրոպական իմպերիալիզմի նվաճո-
ղական քաղաքականության, մյուս կողմից ցարիզմի ռուսացման քաղաքակա-
նության հետևանքով այդ երբեմնի հին ժողովուրդը, որն եղել է մարդկության
կուլտուրայի առաջին ստեղծողներից, հոգեպես աղքատացել էր, իսկ երբեմնի
հարուստ ասորա-բարելական գրականությանից համարյա ոչինչ չէր մնացել:

Պատմական անբարենպաստ պայմանները ծանր հետևանքներ ունեցան
ասորիների կուլտուրական կյանքի համար:

Հայաստանի Լուսժողկոմատի հրահանգով ասորական դպրոցներում ու-
սուցումը տարվում էր մայրենի լեզվով, երրորդ դասարանից՝ հայերեն, իսկ
չորրորդից ռուսերեն լեզու էին անցնում: Բայց այստեղ մեծ դժվարությունների
էին հանդիպում, քանի որ ասորիք մայրենի լեզվով միայն առաջին երեք խմբի
համար դասագիրք ունեին, որի նյութն հնչյունային չուրացվում էր տարի ու
կեսվա ընթացքում: Իսկ այլ առարկաների գծով դեռևս ոչ մի դասագիրք չկար,
ուսուցիչները իրենց անպատրաստ վիճակով անզոր էին լրացնելու այդ բացը:

Դրա պատճառով, խախտելով հրահանվող, արդեն 2-րդ դասառանից մյուս առարկաները անցնում էին ուսերեն լեզվով, օգտագործելով նաև մայրենի լեզվով թարգմանելու սխառնում: Անհրաժեշտ էր ունենալ ասորերեն լեզվով բոլոր առարկաների դասագրքերի լրիվ կոմպլեկտը և մայրենի լեզվով բավարար պատրաստված ուսուցչական կադրեր:

Ասորական դպրոցների համար նորմալ պայմաններ ստեղծելու նպատակով Երևանի Լուսժողկոմատը 1922 թ. հրատարակում է դասագրքեր ուսման 1-ին և 2-րդ տարվա համար, իսկ Վրաստանում հրատարակվում է 3-րդ տարվա դասագիրք: Նույն թվականին Երևանում՝ կարճժամկետ կուրսեր են բացվում մայրենի լեզվով ուսուցիչներ պատրաստելու համար:

Կուլտ-լուսավորական աշխատանքը ասորիների մեջ բավական հաջող էր առաջ գնում, ասորական յուրաքանչյուր 5 գյուղից շորսում կային լիկկայաններ և խրճիթ-ընթերցարաններ, որոնցում ընդգրկված էին տղամարդիկ և կանայք²³:

Ասորիների շրջանում կուլտ-լուսավորական աշխատանքն ավելի լավ հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ էր ասորերեն լեզվով հրատարակել ոչ միայն դասագրքեր, գրականություն, այլև զանազան մեթոդական գրականություն, թերթ, ժուռնալներ և այլն: Հարկավոր էր ուսերենի հետ միասին ընդհանուր կուրսեր կազմակերպել ուսուցիչներ պատրաստելու նպատակով, որտեղ հրավիրվեր ասորի-դասախոս՝ մայրենի լեզու դասավանդելու համար: Ասորական այրուրենը շատ անկատար էր, պահանջում էր արմատական բարենորոգում: Որակյալ կուլտուրական աշխատողներ պատրաստելու համար անհրաժեշտ էր ասորիներից սովորելու ուղարկել մանկավարժական տեխնիկումներ, բուհեր, բանֆակներ և այլ ուսումնական հաստատություններ:

Ասորական դպրոցների պատկերը 1922—26 թթ. Սովետական Հայաստանում²⁴

Տարին	Դպրոցների քանակը	Սովորողների քանակը	Ուսուցիչների քանակը	Մեկ դպրոցին ընկնող բնակչու- թյան թիվը
	1-ին աստիճանի դպրոցներ			
1922—23	5	196	5	—
1923—24	3	202	5	687
1924—25	5	263	10	527
1925—26	4	217	5	658

Ռեսպուբլիկայի աղագային փոքրամասնությունների հետ տարվող կուլտուրական աշխատանքներին համապատասխան օգնություն էր ցույց տալիս ՌԱՖՍՌ կառավարությունը: ՀԱՍՌ Սովնախմբեր 1924 թ. ամռանը նախատեսում է ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համար Դիլիջանում 50 աղբրեջանական ուսուցիչների համար եռամսյա կուրսեր բացել և միամսյա կուրսեր՝ ուսանների, ասորիների, հույների մանկավարժական ֆրոնտի աշխատողների համար: Սակայն Ռեսպուբլիկայի Սովնախմբենի միջոցներն այնքան

23 ՀՌՍՀ ԿՊՈ, ք. 3316, ց. 18, գ. 65:

24 Նույն տեղում:

սուղ էին, որ նա կարող էր կատարել նախատեսվող աշխատանքների միայն 20 տոկոսը, ուստի հարց է հարուցում ՍՍՌՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեին և ՌՍՖՍՌ Սովնացմենին այդ գործն իրականացնելու համար՝ համապատասխան օգնություն ցույց տալ²⁵։ Կասկածից վեր էր, որ միութենական պետական մարմինները ինչպես միշտ, այս անգամ ևս օգնեցին նախատեսվող կուլտուրական միջոցառմանը։

Վերականգնման տարիներին աղգային փոքրամասնությունների շրջանում տարվող կուլտուրական աշխատանքի բնագավառում դեռևս շատ խոչընդոտներ կային, որոնց վերացման համար պահանջվում էր տարիներ՝ համառ և սիստեմատիկ աշխատանք։ Պետական ապարատներում պատահում էին այնպիսի աշխատողներ, որոնք դեռևս չէին ազատագրվել դաշնակցական նացիոնալիստական մնացուկներից, որոնցից, իհարկե, պակաս չափով չէր տուժում նաև հայ բնակչությունը։

Պարտիական-սովետական կազմակերպությունների ողջ աշխատանքն այդ տարիներին ուղղված էր աղգային մեծամասնության և աղգային փոքրամասնությունների միջև գոյություն ունեցող կուլտուր-տնտեսական անհավասարության վերացման, աղգային փոքրամասնությունների կուլտուր-տնտեսական մակարդակի բարձրացման գործին։ Այդ ճանապարհով նրանք մասնակից կդառնային սոցիալիզմի շինարարությանը և պրոլետարիատի ինտերնացիոնալ կուլտուրայի ստեղծմանը։

Լինում էին դեպքեր, երբ շեղումներ էին կատարվում Լենինյան աղգային քաղաքականության գծից, որն արտահայտվում էր աղգային փոքրամասնությունների, նրանց կարիքներին անբավարար ուշադրություն ցույց տալով, անտակտ վերաբերմունքի փաստերով և այլն։

Այդ բնագավառի թերություններից մեկն էլ այն էր, որ աղգային փոքրամասնություններից Կոմունիստական պարտիայի և կոմերիտմիության մեջ դեռևս շատ քիչ մարդիկ էին ընդունվել։ Որոշ մարդկանց մեջ շարունակվում էին պահպանվել նահապետական կենցաղի մնացուկներ, որոնք օգտագործվում էին կուլակների և հոգևորականության կողմից՝ նացիոնալիստական կրքեր բորբոքելու համար։

Կոմունիստական պարտիայի Լենինյան աղգային քաղաքականությունից շեղումները առաջացնում էին փոխադարձ աղգային թշնամության առանձին դեպքեր։

* * *

Հայաստանի տերիտորիայում բնակվող աղգային փոքրամասնությունների կուլտուրական կյանքի որոշ հաջողությունները ավելի ռելեֆ էին դառնում, եթե համեմատում էինք նրանց զրույթունը ցարիզմի և դաշնակների տիրապետության ժամանակաշրջանի վիճակի հետ և հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ տնտեսապես դեռևս թույլ Հայաստանի օբյեկտիվ հնարավորություններն ավելին թույլ չէին տալիս կատարելու։

Վերականգնման տարիներին Կոմունիստական պարտիան ստեղծագործական աշխատանքի փորձ էր ձեռք բերում սոցիալիստական շինարարության

²⁵ ՍՄԿՊ ԿԿ-ին կից ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 353, թ. 7։

րոլոր բնագավառներում, այդ թվում նաև կուլտուրական շինարարության ասպարեզում:

Պարտիայի լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը լայն հնարավորություններ ստեղծեց ՍՍՌՄ-ի բոլոր ժողովուրդների ստեղծագործ ուժերի զարգացման համար, նրանց պետականության, տնտեսության և կուլտուրայի զարգացման ասպարեզում:

Սովետական Հայաստանը վերականգնման տարիներին ապրեց իր պետական ձևավորման հետագա աստիճանը՝ մտնելով նախ ԱՍՖՍՌ-ի և ապա ՍՍՌՄ-ի կազմի մեջ: Դրանով ռեսպուբլիկայի կուլտուրական շինարարությունը սկսեց ավելի սերտորեն կապվել Սովետական Միության եղբայրական մյուս ժողովուրդների կուլտուրաների հետ:

Ինչպես սոցիալիստական շինարարության բոլոր օղակներում, այնպես էլ նոր կուլտուրայի ստեղծման, ամրապնդման և հետագա զարգացման գործում անգնահատելի դեր խաղաց Սովետական Ռուսաստանում արդեն տեղի ունեցած կուլտուրական շինարարության հարուստ փորձը, որի ստեղծագործարար կիրառումը, Հայաստանի յուրահատուկ պայմաններում, պահանջում էր մեծ հմտություն և հատուկ ունակություններ: Այդ փորձի կիրառման ղեկը գտնվում էր Կոմունիստական պարտիայի հմուտ ձեռքերում, որը ղեկավարվելով մեծ լենինի թեորիական աշխատություններով և պրակտիկ ցուցումներով առաջ էր տանում այդ գործը:

Աշխատավոր մասսաների ռևոլյուցիոն խանդավառությունը, մանավանդ բանվորների և գյուղացիների սրտացավ վերարերմունքը ղեկի կուլտուրական շինարարության խնդիրները, երկրի ժողովրդական տնտեսության աստիճանական վերականգնման առաջին քայլերը խոսում էին այն մասին, որ մոտակա տարիներին այդ ասպարեզում կատարվող աշխատանքները ցանկալի արդյունքի կհասնեն:

Շնորհիվ Հայաստանի Կոմունիստական պարտիայի և կառավարության առաջին 5—6 տարվա ազգային փոքրամասնությունների շրջանում տարած հսկայական աշխատանքի, Հայաստանի նախկին իրար ըզլտող, իրար ոչնչացնելու ձգտող ազգություններ մոռացության տվին և անցյալի գիրկը նետեցին ազգամիջյան ընդհարումներն ու թշնամանքը:

Հայաստանում բնակվող ազգերն արդեն ապրում էին համերաշխ, հարադատ աշխատավորական եղբայրական Հայրենիքում, իրենց ջանքերը չխնայելով ռեսպուբլիկայի տնտեսական և կուլտուրական շինարարության վիթխարի խընդիրների իրականացման մեծ ու պատվավոր գործի համար: